

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի Հուլիսի 24-ի թիվ 02 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԿՄՀԲ-ԳՀԱՇՁԲ-20/34»

Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար պրոյեկցիոն ցուցադրության աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՄՀԲ-ԳՀԱՇՁԲ-20/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է սույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 22.07.2020թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 24.07.2020թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Հարգելի գործընկեր՝

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն խնդրում ենք տալ պարզաբանում, ստորև շարադրված հարցերին՝ 1. Ցանկացած պրոյեկցիոն սարքավորում արտացոլում է միայն երկչափ պատկեր և եռաչափ պատկեր ստանալու պահանջը սովորական թեստի հզոր պրոյեկտորի միջոցով, պարզապես հակասում է տարրական ֆիզիկայի օրենքներին: Զուտ տեղեկության համար նշենք, որ պատկերի արտացոլումը որևէ շենքերի, շինությունների, արձանների և նմանատիպ օբյեկտների վրա կոչվում է Outdoor Mapping:

Խնդրում ենք պարզաբանել, թե ինչպե՞ս է Պատվիրատուն պատրաստվում ստանալ եռաչափ պատկեր:

2. Ի՞նչ հեռավորությունից պիտի պատկերը պրոյեկտվի արձանի վրա, արձանից ի՞նչ հեռավորության վրա է նախատեսվում տեղադրել պրոյեկտորը: Այդ տվյալները անհրաժեշտ են պրոյեկտորի համապատասխան ոսպնյակը հաշվարկելու համար (10 հազար լյումեն և ավելին հզորություն ունեցող՝ այսպես կոչված ինստալյացիոն դասի պրոյեկտորների ոսպնյակները ընտրվում են ելնելով առաջադրված խնդիրների և գնվում են առանձին):

3. Ինչ նյութից է պատրաստված առձանը, ինչպիսի՞ն են առձանի չափսերը՝ բարձրություն, լայնություն, խորություն: Խնդրում ենք տրամադրել արձանի գունավոր լուսանկարները տարբեր ոակուրսներից կատարված՝ ներառյալ լուսանկարներն այնտեղից, որտեղ նախատեսվում է տեղադրել պրոյեկտորը: 4. Պրոյեկտորը նախատեսվում է տեղադրել փա՞կ տարածքում թե բացօթյա: Բացօթյա տարածքում տեղակայելու դեպքում պրոյեկտորը ավելի քան ցանկալի է տեղադրել ջերմա և փոշիադիմակայուն հատուկ և բավականին թանկարժեք պատյանի մեջ: 5. Ի՞նչ բովանդակության և ի՞նչի մասին պիտի լինեն պահանջվող եռաչափ 3 ռոպե ընհանուր տևողությամբ անիմացիոն հոլովակները (շեշտենք, որ հոլովակները, բնականաբար, կ լինեն ն սովորական երկչափ):

6. Հրավերի «Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույց» Հավելված N 1-ում նշված 3840 x 2400 յուրահատուկ կետայնությամբ պահանջված հզոր ինստալյացիոն դասի վերին աստիճանի թանկարժեք պրոյեկտորներ արտադրում է միայն բելգիական Barco բնկերությունը, որը պաշտոնապես Հայաստանում ներկայացված չէ: Միջազգային շուկայում այսօր առկա պրոյեկտորների մաքսիմալ ֆիզիկական կետայնությունը կազմում է 4K (4,096 x 2,160 pixels), իսկ 4K/UHD (3,840 x 2,160 pixels) կետայնություն ունեն հեղուկ-բյուրեղային (LCD) հեռուստացույցները և դիսփլեյները: Զուտ տեղեկության համար նշենք, որ հրավերով պահանջված առնվազն 15000 լյումեն պայծառություն ունեցող ինստալյացիոն դասի 4K կետայնության պրոյեկտորները, հիմնականում, օգտագործվում են պրոֆեսիոնալ թվային կինոթատրոններում և նրանց արժեքը սկսվում է մի քանի տասնյակ հազար ԱՄՆ դոլլարից, այն էլ առանց կինոթատրոններում և նրանց արժեքը սկսվում է մի քանի տասնյակ հազար ԱՄՆ դոլլարից, այն էլ առանց առանձին գնվող ոսպնյակի: Ելնելով ոլորտում մեր ունեցած քառորդդարյա փորձից գտնում ենք, որ արձանի մակերեսի վրա պրոյեկտման համար ավելի քան բավարար է ունենալ Full HD (1,920 x 1,080 pixels) կետայնությամբ թվային պրոյեկտոր:

Պարզաբանում N 1

1. Խոսքը վերաբերում է եռաչափ անհիմացիոն շարքի պատրաստմանը, ինչը չի հակասում ֆիզիկայի տարրական օրենքներին: Դիտորդի տեսանկյունից՝ պատկերի եռաչափությունը ստացվում է՝ արձանի ռեյինֆին անհիմացիայի համապատասխանությամբ և դիտորդի համար եռաչափության իլուզիա ստանալով:
2. Արձանը գտնվում է թ. Հրազդան ՝ Ծովինար լճի ջրամբարում: Մասնակից ընկերությունն ինքնուրույն պետք է կատարի պրոյեկտորների դիրքի և ուսպնյակների հաշվարկ:
3. Արձանը պատրաստված է ալյումինից: Արձանի չափումները նույնպես պետք է իրականացնի մասնակից ընկերությունը, որպեսզի կատարի վերոնշյալ պրոյեկտորների դիրքի և ուսպնյակների հաշվարկը:
4. Եռաչափ անհիմացիոն հոլովակների բովանդակության վերաբերյալ սպասում ենք մասնակից ընկերությունների առաջարկներին:
5. Տեխնիկական բնութագրի վերաբերյալ՝ հայտնում ենք Ձեզ, որ տվյալ մրցույթը զուտ պրոյեկտորի գնման մրցույթ չէ, և տեխնիկական բնութագրի մեջ բերված է ստացվող պատկերի, այլ ոչ թե պրոյեկտորի տեխնիկական պահանջները: Մասնակից ընկերությունն ինքն է որոշում՝ ինչ տեխնիկական միջոցներով և պրոյեկտորներով ստանա տվյալ լուսատվությունն ու կետայնությունը՝ համապատասխանեցնելով տեխնիկական բնութագրին :

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ընթացակարգի հրավերում կկատարվի անհրաժեշտ փոփոխություն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել

« ԿՄՀԲ-ԳՀԱՇՁԲ-20/34» ծածկագրով գնահատող հանձնաժողովի Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել

«ԿՄՀԲ-ԳՀԱՇՁԲ-20/34» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Քրիստինն Բաղդասարյանին:

Հեռախոս՝ 060-46-01-51

Էլեկտրոնային փոստ՝ baghdasaryan_1978@mail.ru

«ԿՄՀԲ-ԳՀԱՇՁԲ-20/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով :